

ԿՆԻՔՆ  
1866

**Գ**էորգ ծառայ Քրիստոսի եւ անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Արարատեան առաքելական Մայր եկեղեցոյ սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի.

Յարգամեծար իշխանաց եւ համայն բարեպաշտ ժողովրդոց մերոց՝ մեծաց եւ փոքունց՝ արանց եւ կանանց՝ բնակելոց ի տիրախնամ քաղաքն Շամախի, որոց ամենեցուն մատուցանեմք սէր եւ օրհնութիւն Աստուածային, եւ աղօթս առնեմք առ Աստուած կալ եւ մնալ հաստատուն ի հաւատս Քրիստոնէական ճշմարտութեան անարատ վարուք, եւ կատարեալ բարեպաշտութեամբ, յաջող ի գործս, անփորձ եւ անսասան ի քաղաքական կենցաղավարութիւնս, զերժ յամենայն պատահարաց յերեւելի եւ յաներեւոյթ թշնամեաց մինչեւ ի կէտ կոչմանն Քրիստոսի, եւ բեղմնաւորեալք պտղովք բարութեան եւ առաքինական վաստակօք, որպէս զի արժանի եղիջիք երանելի փառաց եւ յայտնութեան յուսոյն, որ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր: Ամէն:

Եւ ընդ Աստուածապարգեւ եւ Քրիստոսական սուրբ ողջունիս եւ օրհնութեանս յայտ առնեմք բարեպաշտութեանց ձերոց, զի լցեալ եմք ուրախութեամբ եւ բերկրիմք հոգւով, քանզի լուաք զի եկեղեցիդ խախտեալն յերկրաշարժութենէ, զոր սկսեալ էիք վերանորոգել՝ Տեառն յաջողութեամբ եւ ջանասիրութեամբ բարեպաշտութեան Ձերոյ հասուցեալ էք ի կատար, եւ ըստ օրինական կարգադրութեան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ մերոյ կատարելով զնաւահատիս նորին եպիսկոպոսական օրհնութեամբ եւ օծմամբ Սրբալոյս միւռոնի, եւ արդ պաշտէք ի նմին զՏէր եւ փառաւորէք զանուն Նորա Սուրբ եւ ահաւոր, որ փառաւորեալն է ի յաւիտեանս:

Աստուածահաճոյ այդ աշխատութիւն զոր ի գործդ այդ յաճն